ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 19 » դեկտեմբեր 2024թ. No 7362 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 04-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1666-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 5486-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 4580-Ա «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 6699-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության EL 01/3424-24 առ 04.12.2024թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.2023 թվականի ապրիլի 04-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1666-Ա հրամանի հավելվածի *Էլիքուիս դեղահատեր թաղանթապատ 2,5մգ* (N 19625/3/1) և *Էլիքուիս դեղահատեր թաղանթապատ 5մգ* (N 19626/3/1) դեղերի գրանցման հավաստագրերի *“Փաթեթավորումը, թողարկման ձևը”* կետի *“(20/2x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում”* բառերը փոխարինել *“(20/1x20/) բլիստերում, (60/3x20/) բլիստերում”* բառերով,

2.2024 թվականի հոկտեմբերի 08-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 5486-Ա հրամանի հավելվածի Արտրաքսիկամ (N 22363) դեղի “Արտադրողը” կետի

Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մ/շ 1” բառերը փոխարինել *“Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7-որակի և բաց թողնման հսկող, Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, մ/շ 1, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող*” բառերով,

3.2024 թվականի օգոստոսի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 4580-Ա հրամանի հավելվածի Տրիմեթոսուլֆա Օռալե (N 22247) դեղի “Դեղաչափը” կետի “ “40մգ/մլ+200մգ/մլ” բառերը փոխարինել “”200մգ/մլ+40մգ/մլ” բառերով,

4.2024 թվականի նոյեմբերի 21-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 6699-Ա հրամանի հավելվածի Հեմաստադ-ՌՆ (N 22500) դեղի “Արտադրողը” կետի “ *“Ռուբիկոն” ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ”* բառերը փոխարինել *“"Ռուբիկոն" ՍՊԸ, 62-Բ, Մ. Գորկի փ., Վիտեբսկ- բալք արտադրող, փաթեթավորող, բաց թողնման հսկող, "Ռուբիկոն" ՍՊԸ, 62-2, Մ. Գորկի փ., Վիտեբսկ, Բելառուսի Հանրապետություն- որակի հսկող*” բառերով:

Ընդունել թվով 4 հրամաններում փոփոխությունները:

5.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

6.«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

7.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ